

հարուստներին շրի գիշերալին ու ցերեկալին հերթերը վաճառել են: Եվ որոշ գյուղերի առյաթների արտերը ավելորդ գումարը վճարելու կարողություն չունենալու պատճառով փչացել ու այրվել են և առյաթին (այսպիսով) բռնություն ու ցավ է պատճառվել¹:

«Ռեսմ-ի դեշտբանի» („Resm-i destbâni“, արաբերեն-պարսկերեն), նշանակում է դաշտ պահելու հարկ: Այս հարկը պետք է գանձվեր այն ժամանակ, երբ որևէ առյաթի կենդանին (ձին, եզր, գոմեշը, ոչխարը և այլն) մտներ մի որևէ ցանք ու փնաս պատճառեր: Այդ դեպքում կենդանու տիրոջը, որպես պատիժ, արվում էր գավազանի հինգ հարված և գանձվում նրանից 5 ակչե², սակայն, ինչպես դժվար չէ եզրակացնել Գյուրջիստանի ընդարձակ դաֆթարից, «Ռեսմ-ի դեշտբանին» զարձկ էր մշտական գանձվող հարկ անդի առյաթներից, անկախ նրանից, ցանքսի փնաս պատճառվել է, թե ոչ³:

«Ռեսմ-ի թափու» — (Resm-i tapu — արաբերեն-թուրքերեն), հարկ թափուի իրավունքի համար: Այս հարկը պարտավոր էին վճարել այն բոլոր առյաթները, որոնք դաֆթարներում արձանագրված էին: Վճարելուց հետո նրանք իրավունք ձևով կրեին մշակել հողը: Թափուի իրավունքը ժառանգական էր, անցնում էր ինչպես հորից որդուն, այնպես էլ մի եղբորից մյուսին⁴:

«Ռեսմ-ի թափուն» գանձվում էր նաև տուն կառուցելու իրավունք ձևով բերելու համար, ըստ որում, լավագույն հողամասից գանձվում էր հիսուն, միջակից՝ 30 և վատ ակից՝ 10 ակչե⁵:

Արձանագրված բոլոր առյաթները պարտավոր էին մշակել հողը: Հակառակ դեպքում նրանցից գանձվում էին հատուկ հարկեր՝ «չիֆթ բոզան ակչեսի», որ նշանակում է «չիֆթը քայքայողի հարկ», հիմնականում մուսուլման առյաթներից և «լեվենդլիկ» բոլոր առյաթներից, նաև այլ հարկեր, այլ անուններով:

Թուրքերեն «լեվենդ» (levend) բառը, որտեղից և առաջացել է, «լեվենդլիկ»-ը, ունի մի շարք իմաստներ: Նշանակում է ծուլ, գեղեցիկ, նավերում աշխատող թիավար (վերջինը մուտք է գործել թուրքերենի մեջ իտալերենից): Հավանաբար լեվենդլիկը օգտագործվել է «ծուլ» իմաստով: Մալաթիայի կանոնի համաձայն, այն առյաթը, որը չէր մշակի իր արամազրության տակ եղած հողը ու կբաղվեր անտրով, պարտավոր էր վճարել երեք քիլե⁶ ցորեն, որպես լեվենդլիկ ակչեսի: «Լեվենդլիկ» գրամական չափը հավասար էր 150 ակչեի⁷:

Հողագործությունը թողած ու անտրով զբաղվող առյաթներից գանձվող հարկը կոչվում էր նաև «ռեսմ-ի մյուշերբես» („Resm-i mücerred“) —

¹ Erzurum kanunu. s. 70.

² Erzurum kanunu. s. 68. İç II kanunu, s. 49. Diyarbekir kanunu s. 210.

³ Defter-i müfasal vilayet-i Gürcistan s. 24, 25, 27, 35, 37, 41, 47 և այլն:

⁴ Gürcistan kanun-nâmesi. s. 197. նաև Omer Lâtîfi Barkan „Türkiyede toprak meselesinin tarihi esasları“ Üikü 1938, cilt XI, s. 54.

⁵ İç II livasi kanunu, s. 49.

⁶ Քիլեն թուրքական չափ է, որն ըստ կոչերեյի հավասար է 8000 դիրհեմի (տև.ս. А. С. Тверитинова, „Второй Трактат Кочибее“, Учёные записки, 1953, VI, стр. 252).

⁷ Trabizon kanunu. s. 83.